ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 20.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/05

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 12.01.2018թ. թիվ 03/26-3/285-18 գրությամբ «ՆՆԱ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 04109073) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Արագածոտնի մարզպետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 08.01.2018թ. թիվ 01/14.2/4-18 գրության հիման վրա, 12.01.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «ՆՆԱ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություններ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. **<u>ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ Արագածոտնի մարզպետարանը 08.01.2018թ. թիվ 01/14.2/4-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կարիքների համար 21.06.2017թ. շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով գնման ընթացակարգի 39-րդ չափաբաժնի համար առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ՆՆԱ» ՍՊԸ-ն, որի հետ 04.08.2017թ. կնքվել է 2,583,600 ՀՀ դրամ գումարի շինարարական աշխատանքների կատարման «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01-39» պայմանագիրը: «ՆՆԱ» ՍՊԸ-ն մինչև պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետը՝ 01.11.2017թ., կատարել է ընդամենը 544,872 ՀՀ դրամի աշխատանք: Պայամանագրով նախատեսված մնացած աշխատանքներն ավարտելու համար առաջարկվել է «ՆՆԱ» ՍՊԸ-ին արագացնել պայմանագրային պարտավորությունների կատարումը, սակայն մինչ օրս ոչինչ չի արվել:

Ելնելով վերոգրյալից խնդրում ենք Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը՝ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու նպատակով»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Արմեն Ավետիսյանը:

3. **<u>«ՆՆԱ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Խորհուրդը դիմել է «ՆՆԱ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.01.2018թ. Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնելու Ընկերության դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «ՆՆԱ» ՍՊԸ-ի տնօրեն Նորայր Անդրեասյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/05 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 12.01.2018թ. թիվ 03/26-3/285-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ Արագածոտնի մարզպետարանը 08.01.2018թ. թիվ 01/14.2/4-18 գրությունը, ՀՀ Արագածոտնի մարզպետարանի և «ՆՆԱ» ՍՊԸ-ի միջև 04.08.2017թ. կնքված ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման N ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01 ծածկագրով պետական գնման պայմանագիրը, «ՆՆԱ» ՍՊԸ-ի կողմից Խորհրդին հայտնած կարծիքը և դիրքորոշումը.

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի և «ՆՆԱ» ՍՊԸ-ի միջև 04.08.2017թ. կնքվել է ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման ՈՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01 ծածկագրով պետական գնման պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել նույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) N1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «Ոսկեհատի խորքային հորի կառուցում» շինարարական աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:
- 1.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է 1-ը նոյեմբերի 2017թ.:
- 2.1 կետի համաձայն՝ աշխատանքները կատարվում են Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

• 3.1.2 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

• 3.2.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն պարտավոր է աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

«ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով գնման պայմանագրի ընդհանուր գինը կազմել է 2.583.600 ՀՀ դրամ, որից 430.600 ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

ՀՀ Արագածոտնի մարզի Ոսկեհատի համայնքապետարանը դիմել է ՀՀ Արագածոտնի մարզպետարանին՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ Արագածոտնի մարզի Ոսկեհատ համայնքում գոյություն ունեցող 1000մ խորությամբ 2 խորքային հորերը երկար ժամանակ շահագործվելուց հետո ունեն վերանորոգման կարիք: Համայնքապետարանի առաջարկով մարզպետարանը պատվիրել է խորքային հորերի վերանորոգման նախագիծ և մարզի հրատապ ծրագրերի իրականացման համար հատկացված գումարների շրջանակներում հայտարարվեկ է կապալառուի ընտրության մրցույթ: Խորքային հորերում նախկինում տեղադրված ЭЦВ-12-16-100 մակնիշի խորքային պոմպերը, ըստ կապալառուի, ներկայումս ՀՀ-ում չկան: Որպեսզի խորքային հորերի վերանորոգման ծրագիրը չտապալվի, համայնքապետարանն առաջարկում է հանձնարարել նախագծող կազմակերպությանը խորքային պոմպերի նորով փոխարինումը նախահաշվում փոխարինել հորերում տեղադրված պոմպերի վերանորոգումով, ինչը վերջինիս կողմից ընդունվել է՝ բանավոր համաձայնությամբ:»:

Պատվիրատուն 08.11.2017թ. գրությամբ դիմել է «ՆՆԱ» ՍՊԸ-ին՝ զգուշացնելով վերջինին պայմանագրով նախատեսված աշխատանքները ճիշտ ժամկետում կատարելու մասին:

Ի պատասխան պատվիրատուի 08.11.2017թ. գրության «ՆՆԱ» ՍՊԸ-ն 29.11.2017թ. թիվ 05 գրությամբ հայտնել է, որ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի և «ՆՆԱ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի շրջանակներում նախատեսված աշխատատնքները՝ բացառությամբ Ոսկեհատ համայնքի խորքային հորի կառուցման աշխատանքների, ավարտվել են մինչև վերջնաժամկետի լրանալը:

Միաժամանակ, Ընկերությունը տեղեկացրել է Պատվիրատուին, որ Ոսկեհատի խորքային հորի կառուցման աշխատանքները «ՆՆԱ» ՍՊԸ-ի կողմից չեն կարող իրականացվել, քանի դեռ ՀՀ Արագածոտնի մարզպետարանը շինհրապարակը էլեկրաէներգիայով և ջրով չի ապահովել, և հայտնել է, որ սպասում է Պատվիրատուի կողմից շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ պայմանների շուտափույթ ապահովմանը:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի և «ՆՆԱ» ՍՊԸ-ի միջև 04.08.2017թ. կնքված ՊՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01 ծածկագրով պետական գնման պայմանագրի շրջանակներում 24.11.20187թ. կողմերի միջև ստորագրվել է 544,872 ՀՀ դրամի կատարված աշխատանքների հանձնման-ընդունման N1 արձանագրությունը:

Այնուհետև, ի պատասխան «ՆՆԱ» ՍՊԸ-ի 29.11.2017թ. թիվ 05 գրության, 19.12.2017թ. գրությամբ ՀՀ Արագածոտնի մարզպետարանը վերջինիս հայտնել է, որ Ընկերության կողմից իրականացվող Ոսկեհատ համայնքի խորքային հորի կառուցման աշխատանքները ավարտելու և պոմպերի աշխատանքը փորձարկելու համար մարզպետարանը պատրաստակամ է շինհրապարակն ապահովել անհրաժեշտ էլեկտրաէներգիայով և ջրով, և առաջարկել է կարճ ժամկետում ավարտել պայմանագրով նախատեսված աշխատանքները:

«ՆՆԱ» ՍՊԸ–ն 21.12.2017թ. գրությամբ դարձյալ դիմել է պատվիրատուին՝ նշելով, որ 19.12.2017թ. պատրաստվել էր վերսկսել շինարարական աշխատանքները, սակայն, ինչպես նախկինում, շինհրապարակը ապահովված չի եղել անհրաժեշտ պայմաններով, և խնդրել է շուտափույթ լուծում տալ խնդրին:

22.12.2017թ. ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ՊՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01 ծածկագրով պետական գնման պայմանագրի շրջանակներում կատարվող աշխատանքներն ուսումնասիրելու և տեղում արձանագրություն կազմելու համար ձևավորված աշխատանքային խմբի կողմից կազմվել է արձանագրություն, որով արձանագրվել է, որ կապալառու կազմակերպության կողմից կատարվել են պայմանագրով նախատեսված ապամոնտաժման աշխատանքները, սակայն չեն կատարվել խորքային հորի վերանորոգման, պոմպերի տեղադրման և փորձարկման աշխատանքները, այն պատճառաբանությամբ, որ օբյեկտում ջուր և հոսանք չկա:

Նույն արձանագրությամբ նշվել է, որ համայնքի ղեկավարը պատրաստակամություն է հայտնել ապահովել պոմեպերի փորձարկման համար անհրաժեշտ քանակի ջուր, իսկ անհրաժեշտ էլեկտրամատակարարումը կապահովի շարժական էլեկտրակայանը: Արձանագրվել է նաև, որ խորքային հորերի հետագա շահագործման համար նախկինում տեղադրված էլեկտրական ենթակայանները քանդված և թալանված են և գտնվում են անմխիթար վիճակում:

Պատվիրատուն 22.12.2017թ. գրությամբ դիմել է «ՆՆԱ» ՍՊԸ-ին և հայտնել, որ չնայած մարզպետարանի կողմից բազմաթիվ հիշեցումներին, Ընկերությունը Ոսկեհատի խորքային հորի կառուցման աշխատանքները չի ավարտել, չնայած այն հանգամանքին, որ պատվիրատուի կողմից Ընկերությանը հնարավորություն էր տրվել այդ աշխատանքներն ավարտել մինչև 2017թ. ֆինանսական տարվա ավարտը:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ «ՆՆԱ» ՍՊԸ-ի տնօրենը նշեց, որ Ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունները սահմանված ժամկետում չկատարելու պատճառը շինհրապարակում անհրաժեշտ էլեկտրաէներգիայի և ջրի բացակայությունն է եղել, որոնք, չնայած պատվիրատուի կողմից բազմաթիվ անգամ գրավոր և բանավոր հավաստումների, այդպես էլ մինչև պայմանագրի կատարման վերջնաժամկետը Պատվիրատուի կողմից չեն ապահովվել: Ընկերության տնօրենը նշեց նաև, որ էլեկտրաէներգիայի բացակայության պայմաններում խորքային հորերում վերանորոգված պոմպերի տեղադրումն՝ առանց դրանց վերագործարկման, կհանգեցներ պոմպերի նագարակալմանը, ժանգոտմանը, և որպես հետևանք՝ արագ շարքից դուրս գալուն, ինչը լրացուցիչ ֆինանսական ծախս կառաջացներ համայնքի համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

• 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «ՆՆԱ» ՍՊԸ-ն ՀՀ Արագածոտնի մարզպետարանի հետ կնքել է ՈՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01 ծածկագրով պետական գնման պայմանագիր, սակայն պայմանագրով սահմանված ժամկետում չի կատարել իր կողմից ստանձնած պարտավորությունները ողջ ծավալով, սակայն պատվիրատուի կողմից պայմանագիրը միակողմանի չի լուծվել:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Պատվիրատուն ստանձնել է պարտավորություն Ընկերության կողմից աշխատանքների կատարման համար անհրաժեշտ պայմանները՝ էլեկտրամատակարարումը և ջրամատակարարումը, ապահովելու համար, սակայն դրանք չի ապահովել, որի արդյունքում Ընկերությանը զրկվել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները ողջ ծավալով կատարելու հնարավորությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «ՆՆԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.01.2018թ. «ՆՆԱ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 04109073) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**